

# ՄԵԼՔՈՆԵԱՆԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ (Բ)

Մելգոնեան Կրթական Հաստատութեան շրջափակին ճիշդ կեդրոնը կը գտնուի Մեսրոպ Մաշտոցի կիսանդրին: Հիմա կիսանդրին կու լայ, քանի երէկ իր շուրջ կը խայտային Արան, Յովիկը, Արտաւազը, Արմենակը, Մերին ու Լուսինէն, իսկ 2005 Յունիսէն կը սողան մոզէզներ, կարիճներ ու այլ միջատներ:

Մելգոնեան Կրթական Հաստատութեան մուտքի ձախ պատին փորագրուած է Հայոց այբուբենը: Հիմա Հայոց տառերը կու լան, քանի չունին կարգադրներ, գիրենք փայփայող մատղաշ Հայորդիներ:

Մելգոնեան Կրթական Հաստատութեան ձախ շէնքին ներքեւ կը գտնուի Հաստատութեան հարուստ մատենադարանը: Մատենադարանին հայերէն գիրքերն ու մամուլի ճոխ հաւաքածոն հիմա թիրախ են ցեցերու, ուտիճներու եւ մլուկներու, քանի այդպէս փափաքեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի «ձեռներց նախագահ»-ը: Աւելի «բախտաւոր» են անգլիատառ գիրքերը, քանի Հ.Բ.Ը.Մ.-ի վարժարանը՝ որպէս նուէր (Գարեգին Կոստանեան կոչուած այս սողունը փոխանակ ազգային այդ հարստութիւնը տրամադրելու հայկական Նարեկ վարժարանին կամ զրկելու Կաթողիկոսարան կամ Հայկազեան Համալսարան, առօր-փառօր կը նուիրէ օտարներու):

Հայ բանաստեղծութեան իշխան Վահան Թէքէեան թրքական եաթաղանին սրածութեան մթնոլորտը բնորոշեց գրելով՝ «Ահաւոր բան մը այնտեղ կը կատարուի մութին մէջ»։ Հայկական տարբերակը աւելի վատ է եղեր, որովհետեւ՝ ահաւոր բան մը այստեղ՝ կը կատարուի լոյսին մէջ, օր ցերեկով, բացայայտօրէն: Որովհետեւ՝ Մելգոնեանի ողբերգութեան հեղինակ կազմակերպութեան՝ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան «Պատուոյ Անդամ» Գարեգին Բ. կաթողիկոս (աւագանի անունով Կտրիճ, դուք հասկցէ՛ք՝ կտրող) Հայոց Գիրերու Գիւտին 1600-ամեակին առիթով տարածած սրբատառ կոնդակով «յորդոր» է «կարգում» «2005 թուականին համազգային հանդիսութեամբ ու շուքով տօնել Հայ Գրերի ստուածօրհնեալ գիւտի պանծալի յիշատակները» Հայաստանի եւ Սփիւռքի «գաղթօճախներում», մոռնալով՝ որ նոյնինքն 2005-ին կիպրահայութիւնը զրկուեցաւ միակ երկրորդական վարժարանէ, սփիւռքահայութիւնը զրկուեցաւ միակ գիշերօթիկ դպրոցէն, Սփիւռքը զրկուեցաւ եղեռնէն վերապրում խորհրդանշող 79-ամեայ փառահեղ կրթօճախէն եւ պուլկարահայ, յունահայ, ալպանահայ գաղութները զրկուեցան ազգային ոգի ու աւելն փոխանցող մայր երակ՝ Մելգոնեանէն: Վեհափառի պաշտօնը զբաղեցնող Գարեգին Բ. երեւի իր քարտէսէն ջնջած է Կիպրոսն ու անոր յարակից հայագաղութները: Ի՞նչ լաւ կ'ըլլար, որ վեհափառը այդ կոնդակը նախ յանձնէր իր պաշտօնակիցներուն՝ «ձեռներէց նախագահ»-էն սկսեալ: Կամ, ի՞նչ լաւ կ'ըլլար, որ Մելգոնեանի սաներով նոյնպիսի կոնդակ գրէինք եւ յղէինք Ս. Էջմիածին՝ խնդրելով, որ 2005-ին «փափաքում ենք Մելգոնեանում համազգային հանդիսութեամբ ու շուքով տօնել Հայ Գրերի աստուածօրհնեալ գիւտի պանծալի յիշատակները», բայց՝ «ձեր գործակիցների պատճառով զրկուում ենք նոյնիսկ տեսնել Մեսրոպ Մաշտոցի կիսանդրին՝ Մելգոնեանի տարածքում»: Հրաշալի՛ կ'ըլլար, որ վեհափառը իր կոնդակին գործադրութիւնը սկսէր իրմով:

Յամենայնդէպս, Գարեգին Բ.- Հ.Բ.Ը.Մ.- Մելգոնեան յարաբերութեանց մասին կարելի է երկա՛ր գրել ու փաստերով՝ հասնելու վտանգաւոր սահմաններու. բայց... անցինք առ այժմ:

Հայոց Գիրերու Գիւտի 1600-ամեակին առիթով Անթիլիասէն հրատարակուած կոնդակը կ'ըսէ. «1600-ամեակը պէտք է առիթ մը դառնայ շեշտելու հայ լեզուին առանցքային դերը մանաւանդ այսօր՝ որպէս անխախտ ու անխախտելի հիմքը մեր ժողովուրդի ցեղային, ազգային ու մշակութային միութեան»։ այդ պատճառով, 1600-ամեակի տարին, երբ 250 աշակերտներ կը զրկուէին այդ «առանցքային» կառոյցէն՝ Մելգոնեանէն, վեհափառը կ'անգրտանար: Կոնդակը կ'անդրադառնայ «մեր լեզուէն ներս գոյութիւն ունեցող ներկայ տարբերութիւնները»-ուն եւ կ'առաջադրէ. «Հետեւաբար, անհրաժեշտ է որ անոնք հանդուրանային կերպով, համազգային մաշտատապով ու ծրագրուած մօտեցումով սրբազրուին ու մեր լեզուն լուրջ ու համապարփակ վերանայման եւ վերաբերեցողացման ենթարկուի»: Բաւական ուշացած չե՞նք. մինչեւ առաջին հանգրուանին սկիզբը, վստահաբար հայախօսներու թիւը պիտի նուազի: Վեհափառը եթէ կը կարծէ, թէ արեւելահայեր կամաց-կամաց իրնց լեզուն պիտի «վերաբերեցողացնեն» եւ վերադառնան Մեսրոպեան տարբերակին, ես կը վախնամ, որ Սփիւռքի մէջ աւելի՛ պիտի գերիշխէ արեւելահայերէնը եւ մե՛նք է որ պիտի խօսինք արեւելահայերէն, քանի գաղութներ ունինք գուտ արեւելահայ, գաղութներ՝ աւելի արեւելահայ քան բնիկներ. սպանահայ, լեհահայ, հոլանտահայ, կիպրահայ, պուլկարահայ, ռումանահայ, յունահայ, անգլիահայ, շուէտահայ գաղութներուն մեծամասնութիւնը արեւելահայ է: Նիկոսիոյ Նարեկ արեւմտահայ վարժարանը կը գոյատեւէ շնորհիւ արեւելահայերու, որոնք Հայաստանի «անկախութենէն» ետք «փրկուեցան» Կիպրոս գալով: Որդիս առաջին օրը երբ յաճախեց Նարեկ եւտուն վերադարձաւ, ըսաւ. «Ի՞նչ ես ուզում, ախպեր»: Այո, մեր

լեզուն վտանգուած է, քանի մե՛նք վտանգուած ե՛նք, քանի ունինք այնպիսի՛ ազգային ու հոգեւոր պետեր, որոնք դպրոցի փակման ի տես գայրանալու փոխան, իւրաքանչիւրը իր շահը կ'որոնէ:

Ինչպէս կը պարզուի, սրբատառ կոնդակներն ու կեանքի դառն իրականութիւնները բաւականին հեռու են իրարմէ: 100 հազարանոց լատին-ամերիկեան հայագաղութներու մէջ քանի՞ հոգի կատարեալ հայախօս է. 300 հազարանոց ֆրանսահայ գաղութին քանի՞ տոկոսը հայախօս է, եթէ զանց առնենք Միջին Արեւելքէն վերջերս գաղթածները: Ամերիկահայ գաղութէն եթէ վերցնենք վերջին 20 տարին գաղթածները քանի՞ հայախօս կարելի է գտնել:

Ինչո՞ւ չենք խոստովանիր եւ չենք ուզեր տեսնել իրականութիւնը, թէ կեանքի պահանջը ո՛չ թէ բերեցողացած հայերէնն է, այլ՝ անգլերէնը: Այս առումով, ժողովուրդը բնազդով զիտէ լուծել իր հարցը եւ պատահական չէ, որ ան հետամուտ է օտար լեզուներու՝ քան իր մայրենիին. առաւել, եթէ դպրոց կը փակուի եւ մարդիկ կը մնան լուռ ու անտարբեր, ինչո՞ւ տակաւին օրօրուիլ հայերէնով: Արամ Ա. կաթողիկոս, Ա.Մ.Ն. կատարած հովուապետական այցելութեան մը ընթացքին, ամերիկահայ երիտասարդութեան տուած է դասախօսութիւն մը հայ լեզուի, մշակոյթի, ինքնութեան ու պատմութեան շուրջ... անգլերէնով: Իսկ ի՞նչ ըսել «Հայապահպանման» առաջատար կազմակերպութեան՝ Հ.Բ.Ը.Մ.-ի դեկավորութեան մայրենի լեզուին՝ անգլերէնին, երբ մանաւանդ Հ.Բ.Ը.Մ.-ի կրթական ցանցին պատասխանատուն անգլիախօս մըն է, հեռու՝ հայերէն լեզուէն ու հայ մշակոյթէն:

Ի՞նչ հեռանկար ունի «բերեցողացած» հայերէնը կամ արեւմտահայերէնը. ո՛չ մէկ: Եթէ հայութեան կէսը հայախօս է, այդ կէսին կարելու տոկոսը արեւելահայերէնի գիտակ է: Արեւելահայերէնով ո՞րք եւ քանի՞ հոգիի հետ կարելի է հասկնալ, հասկցուիլ: Այլեւս դո՛ւրս եկէ՛ք Լիբանան-Սուրիա-Պոլիս սահմաններէն եւ տեսէ՛ք ճշմարտութիւնը:

Անթիլիասէն հրատարակուած կոնդակը կ'եզրակափակուի սապէս. «Կոչ կ'ուղղենք մեր թեմերու Առաջնորդներուն եւ Ազգային Իշխանութեանց, մեր կրթական, մշակութային ու հասարակական կազմակերպութիւններուն ու միութիւններուն յատուկ ձեռնարկներու, ծրագրներու ու աշխատանքներու ճամբով կարեւորութեամբ շեշտելու հայ լեզուի վճռական տեղը ու դերը մեր գաղութներու կեանքի հոգեւոր, կրթական, մշակութային, ընկերային ու հասարակական մարզերէն ներս:

«Կոչ կ'ուղղենք նաեւ մեր հոգեւոր խնամքին յանձնուած մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, խոր գիտակցութեամբ ու յատուկ նախանձախնդրութեամբ արժեւորելու Հայ Գիրերու Գիւտին 1600-ամեակը իրենց անհատական թէ հաւաքական կեանքէն ներս»:

Անթիլիասի վեհափառը եւս երեւի նկատի չունի Կիպրոսը: Այլապէս՝ աւելի «նախանձախնդիր» պիտի ըլլար Կիպրոսի միակ կեդրոնական վարժարանին անկումով: Աւելին, ամենայն ինքնավստահութեամբ կրնամ գրել, թէ կիպրահայ կազմակերպութեանց մեծամասնութիւնը ամենայն անտարբերութեամբ ընդունեց Մելգոնեանի փակումը: Գաղութին հայեցի դիմագիծն ու նորափթիթ սերունդները վտանգուեցան, Առաջնորդ ու Ազգային Իշխանութիւններ Նիկոսիոյ պատմական հայկական գերեզմանատունը փորփրեցին՝ աւելի վարկաբեկելով հայու անունը՝ յաջ յունական շրջանին: Իսկ Մելգոնեանի հարցով՝ որո՞ւ հոգը: Նաեւ, ամենայն ինքնավստահութեամբ կրնամ արձանագրել, թէ յոյներ եւ օտարներ աւելի բարկացան ու ցաւեցան Մելգոնեանի վախճանով, քան՝ Անթիլիասի «հոգեւոր խնամքին յանձնուած մեր ժողովուրդի բոլոր զաւակները»՝ կիպրահայ զաւակները: Ուրեմն՝ կա՛մ վեհափառը անտեղեակ է կիպրահայ իրականութենէն, կա՛մ կիպրահայեր չեն անսար Վեհափառ Տիրոջ կոնդակին ու յորդորին:

Հետաքրքրական փաստ մը եւս. վեհափառը գիտէ՞, որ իրեն մօտիկ շրջանակին անդամները (Հ.Յ.Գ.) կամ Ազգային Իշխանութիւնները՝ զանազան միաւորներով եւ մասնիկներով, չեն յաճախած գաղութին «առանցքը» հանդիսացող Մելգոնեան Կրթական Հաստատութիւն, կամ՝ իրենց զաւակները չեն յաճախած միակ հայկական երկրորդական վարժարանը՝ Մելգոնեան. նոյնիսկ եթէ բաց մնար Մելգոնեանը, անոնց զաւակները պիտի չյաճախէին հոն: Հետեւաբար, ինչո՞ւ գովել եւ յանձնարարել հայ դպրոց. որո՞ւ համար. ո՞վ, զո՞վ կը խաբէ:

Եզրակացնելու համար երկու սրբատառ կոնդակներու պարագան, մարդ կրնայ տարակուսիլ.՝ կա՛մ վեհափառները կ'այլրին այլ մոլորակ եւ մենք՝ այլ, կա՛մ իրենք կ'այլրին այլ դարաշրջան (19-րդ դար) եւ մենք՝ այլ (22-րդ դար). անշուշտ՝ նկատի առելով կոնդակներուն բառամթերքը, ոգին եւ բովանդակութիւնը եւ ձուլուող, օտարախօս հայորդիքը, փակուող Մելգոնեանը, անկում ապրող հայ գիրն ու դպրութիւնը: Հ.Բ.Ը.Մ.-ի ամերիկաշունչ ղեկավարներն ու Հ.Բ.Ը.Մ.-ի «Պատուոյ Անդամ»-ը:

Արամ Ա. կաթողիկոսին ղեպուկ խօսքերէն մէջբերենք.՝ «Ղեկավարը հրահանգ արձակողը չէ, այլ իրեն վստահուած գործին յառաջապահ անձը»։ «Ղեկավարը հաշիւ պահանջողը չէ, այլ առաջին հաշիւ տուողը» (Տես, «Ողբ Եկեղեցւոյ», Նահապետ Մելգոնեան, էջ 14. Գալիֆորնիա, 2002): Այս տրամաբանու-

թեամբ, որպէս շարքային հայ իրաւունքս է հոգեւոր ղեկավարներէս հաշիւ պահանջել եւ ըսել՝ ինչո՞ւ լուռ մնացիք Մելգոնեանի հարցով. դուք հաշուետու էք եւ պատասխանատու: Ձեր լուրթիւնը կը թարգմանուի որպէս՝ մեղսակից լուրթիւն եւ ամօթալի անտարբերութիւն:

Մելգոնեանի հարցով շահախնդիր երրորդ կառոյցը, անկասկած, Կիպրոսի թեմի Առաջնորդութիւնն է, քանի հարուածը կ'ուղղուի նախ կիպրահայութեան: Ի՞նչ դիրք բռնեց առաջնորդը՝ կաթողիկոսական փոխանորդ Գերշ. Վարուժան արք. Հերկելեան:

Հակառակ անոր, որ սրբազանը հայ գիրքի սիրահար մըն է, հայ գիր ու դպրութեան ջատագով մը, խմբագիրը «Արծիւ» ամսաթերթին, դժբախտաբար, իր կեցուածքը չտարբերեցաւ նախորդներէն. այսինքն՝ դատապարտելի անտարբերութիւն: Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան Կիպրոսի Վարիչ Մարմինի պատուիրակութեամբ երբ այցելեցինք զինք՝ դատապարտելու իր լուրթիւնը Մելգոնեանի հարցով, փսոս՛ս, իր պատասխանը եղաւ.՝ «Ոչ ոք իմ կարծիքս հարցուց»: Ուրեմն, պէ՛տք է կարծիք հարցնել՝ երբ կը վտանգուի գաղութը: Կարծիքներ յայտնցին՝ Կիպրոսի խորհրդարանի նախագահէն մինչեւ նախարարներ ու երեսփոխաններ, մամուլի աշխատակիցներ եւ լրագրողներ, հասարակ քաղաքացիներ եւ օտար ուսուցիչներ, բայց մեր առաջնորդը մնաց անկարծիք՝ քանի հարցնող չունեցաւ...: Ան դառնացած է, որ Մելգոնեանի փակումին առիթով պատասխի մը վրայ գրուած է՝ «Երկրորդ Յեղասպանութիւն»։ Մելգոնեանի անկումը «Երկրորդ Յեղասպանութիւն» է, հապա ի՞նչ է, երբ հայ սերունդներ կը զրկու լեզուէ, մշակոյթէ, ինքնութենէ ու պատմութենէ: Մելգոնեանի ամենատաքնապալի օրերուն, առաջնորդը օր մը չայցելեց դպրոց՝ իրմէ քիչ անդին գտնուող. ներկայ չեղաւ Մարտ 24 2004-ի ժողովրդային ցոյցին՝ Մելգոնեանի փակումը դատապարտող. օր մը ասան չբարձրացուց հայ դպրոցի ոտնահարումը դէմ՝ հռուար թէ կիպրաբնակ: Որո՞ւ համար են իր պարոնաշէն խօսքերը, երբ գաղութին ողնաշարը փշրուեցաւ ու ինք լուց: Որո՞ւ համար են իր հայ գիրքի նուիրուած ցուցահանդէսները, երբ իրմէ քիչ անդին գտնուող Մելգոնեանի մատենադարանին գիրքերը կը փոխն օր ցերեկով: Ո՞ւր եւ ե՞րբ առաջնորդ մը պիտի աղաղակէ յանուն Մեսրոպ Մաշտոցին, եթէ ոչ՝ դպրոցի մը մայրամուտին: Բայց, լուց Կիպրոսի հայ հոգեւոր պետը, Անթիլիասի «հոգեւոր խնամքին» յանձնուած թեմին ազգային-հոգեւոր ղեկավարը..., եւ այս՝ հակառակ իր յախուռն, կորովի եւ համարձակ նկարագրին:

\* \* \*

Մելգոնեանի փակումով կեանքի պայմանները զիս նետեցին այլ վայր: Հոն յարաբերելու համար պէտք է խօսիս՝ կիսատ-պռատ յունարէնով, եթէ չհասկնան՝ ձեռքով-ոտքով: Քանի ոմանք գիտեն անգլերէն՝ պէտք կու գայ այդ լեզուն: Գործընկերներէս շատեր Ռուսաստանէն գաղթած ու հասած են Նիկոսիա, ուրեմն՝ առիթ մը վերյիշելու ռուսաց լեզուն: Անմիջական գործընկերս՝ Պարսկաստանէն փախած ազերի մը, ուրեմն՝ քիչ մը թրքերէնի իմացութիւնը կ'օգնէ շփուելու համար. այլ գործընկեր մը, որուն կողակիցը լիբանանցի է, կ'ուզէ սորվիլ եւ լաւ իմանալ արաբերէն, ուրեմն՝ առիթ մը արաբերէն լեզուն չմոռնալու: Փաստօրէն, հաց ճարելու, ապրելու համար, հինգ լեզուներու ծանօթութիւնը կ'օգնէ հասկնալ-հասկցուելու. անշուշտ՝ բացի հայերէնէն: 40 տարեկանիս հազիւ իմացայ, որ միակ լեզուն, որ հաց, գործ, տուն-տեղ չ'ապահովեր, հայերէնն է: Այո, 1600-ամեակի կոնդակներ, հայերէնով մարդ անօթի կը մնայ թշուառական կ'ըլլայ:

Բարեբախտաբար, գործատեղս կ'աշխատին Մելգոնեանը աւարտած նախկին աշակերտներս (5 հոգի), որոնք իրենց կրթաթոշակը ապահովելու համար բազուկ ու քրտինք կը սպառեն: Չէ՞ որ Հ.Բ.Ը.Մ.-ը իր գումարները պիտի սպառէ դպրոց փակելու, Կորտըն Անտրսընը կերակրելու, օտարներու դրամ բաշխելու, դատ-դատարանի ծախսեր հոգալու՝ Մելգոնեանի փակման համար: Ուրեմն, մեր հայրենի ու դարաբացի տղաքը պէտք է աշխատին: Անոնց հետ միայն կարելի է շփուիլ մայրենիով՝ արեւելահայ տարբերակով անշուշտ:

Հետեւաբար, վերջին շրջանին 40 տարեկանիս զգացի, որ արեւմտահայերէնի «բերեցողացած» լեզուն միակ անգործածելի, ոչ-անհրաժեշտ, նոյնիսկ անիմաստ լեզուն է, որուն կառուցելով սովահար կ'ըլլաս: Եթէ ուզեմ չմոռնալ արեւմտահայերէնը, պէտք է խօսիմ հայելիի դիմաց՝ առանձին: Այս սորվեցուց Հ.Բ.Ը.Մ.-ի «ձեռներէց նախագահ»-ը. այս կ'ուզեմ յանձնարարել բարեկամներուս, հարազատներուս, ծանօթներուս - սորվեցէ՛ք ամէն ինչ, բացի Պետրոս Դուրբանի, Մատթէոս Զարիֆեանի եւ Միսաք Մեծարեցի լեզուէն. այդ կը պատկանի գիրքերուն եւ սրբատառ կոնդակներուն:

Վերջապէս սորվեցայ, որ արեւմտահայերէնի «բերեցողացած» լեզուն մարդս կ'առաջնորդէ անգործութեան եւ անօթութեան: Այս կիզող եւ դառն իրականութիւնը ապրեցայ մորթիս վրայ, սորվեցայ մաշկովս՝ արցունքով, քրտինքով եւ արիւնով...:

Ամէն:

ԱԻԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ